Ծրագրի անվանումը	Վարդենիս համայնքի 35 գյուղական բնակավայրերի և Վարդենիս քաղաքի համար ավտոաշտարակի ձեռքբերում
Մարզ	Գեղարքունիք
Համայնքը /համայնքները	Վարդենիս
Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից	175կմ, 75կմ
Համայնքի /բնակավայրի բնակչությունը	Վարդենիս՝ 40030 Վարդենիս, Ակունք, Այրք, Ազատ, Ախպրաձոր, Ավազան, Արփունք, Արեգունի, Գեղամասար, Գեղամաբակ, Գեղաքար, Դարանակ, Լճավան, Լուսակունք, Խաչաղբյուր, Ծովակ, Կութ, Կախակն, Կարճաղբյուր, Կուտական, Մաքենիս, Մեծ Մասրիկ, Ներքին Շորժա, Նորակերտ, Նորաբակ, Շատջրեք, Շատվան, Ջաղացաձոր, Սոթք, Վանեվան, Վերին Շորժա, Տորֆավան, Տրետուք, Փամբակ, Փոքր Մասրիկ, Ջառիվեր:
Սահմանամերձ համայնք/բնակավայր	Վարդենիս համայնքի Կութ, Ազատ,Սոթք, Նորաբակ, Վերին Շորժա, Ներքին Շորժա բնակավայրերը սահմանամերձ են:
Բարձր լեռնային համայնք /բնակավայրի	Բարձրլեռնային
Ծրագրի ընդհանուր նկարագրությունը, դրա իրականացման անհրաժեշտությունը,	Վարդենիս համայնքի 35 գյուղական բնակավայրերը և Վարդենիս քաղաքը բարձրլեռնային են: Բնակավայրերը ունեն դպրոցներ, գործում են բուժկետներ, հիվանդանոց, հոսպիտալ և վարչական շենքեր, զարգացած են համայնքային ենթակառուցվածները: Գյուղական բնակավայրերի բնակիչները հիմնականում զբաղվում եմ անասնապահությամբ և հողագործությամբ: Բնակավայրերում առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնց լուծման համար իրականացվում են ամեն անհրաժեշտ գործողություններ: Այդ հիմնախնդիրներից շատերը լուծում են սուբվեցիոն ծրագրերի միջոցով, սակայն առկա են մի շարք առաջնային անհարժեշտ կարիքներ, որոնք չենք կարող իրականացվել սուբվեցիոն ծրագրերի միջոցով: Վարդենիս համայնքի առաջնային խնդիրներից է բոլոր բնակավայրերը ապահովվել թողոցային լուսավորությամբ:

Բնակավայրերում փողոցային լուսավորությունը ապահովելու նպատակով մշակվում են սուբվենցիոն ծրագրեր և բնակավայրերի 45% ավելին լուսավորված են և ունեն գիշերային մշտական փողոցային լուսավորություն: Էլեկտրասյուների մեծ մասը և դրանց վրա տեղադրված լուսատուներն աստիճանաբար քայքայվում, վնասվում են, էլեկտրալարերն անցնում են օդով՝ մի սյունից դեպի մյուսը: Երկար տարիների շահագործման, եղանակային անբարենպաստ պայմանների (քամի, առատ ձյուն) պատճառով էլեկտրալարերը հաճախ վնասվում են, խափանվում է փողոցային լուսավորության մատակարարումը: Էլեկտրալարերի վթարային խափանումը հանգեցրել է հրդեհի դեպքերի, բարեբախտաբար տուժածներ չեն եղել:Համայնքը մեծ խնդրի առաջ է կանգնում վնասված լուսատուների փոխարինման ժամանակ, քանի որ համայնքապետարանը չունի ավտոշտարակ, այն վարձակալում է համայնքի բնակիչից, և միշտ չէ, որ բնակիչի ավտոաշտակը գտնվում է սարքին վիճակում և հասանելի մեզ: Այդ իսկ պատճառով հաճախ վնասված լուսատուների փոխումը տևում է մի քանի օր և բնակավայրերի փողոցները մնում են առանց լուսավորությունը, ինչը մեզ համար շատ մտահոգիչ և անհանգստացնող է: Էլեկտրալարերի վթարների, վնասված լուսատուների փոխարինման համար համայնքը չունի ավտոաշտարակ, որպեսզի կարողանա արագ արձագանքել և լուծել խնդիրները:Վարդենիս համայնքը իր 36 բնակավայրերով ունի շուրջ 7564 լուսատու, յուրաքանչյուր ամիս շուրջ 890 լուսատու ենթակա է լինում փոփոխման: Ամռան ամիսների թիվ ավելի է մեծանում: Ամանորյա զարդարանքների ժամանակ ավտոաշտարակի անհրաժեշտությունը էլի ավելի է առաջանում: Համայնքային ենթակայությամբ գործող կառույցների, մասնավոր հատվածի շենք-շինությունների տանիքներում առկա խնդիրների, տանիքների մասնակի վերանորոգման աշխատանքների համար ավտոաշտարակի անհրաժեշտություն կա համայնքում: Համայնքային ենթակայությամբ գործող կառույցների, մասնավոր հատվածի շենք-շինությունների տանիքներում առկա խնդիրների, տանիքների մասնակի վերանորոգման աշխատանքների համար ավտոաշտարակի անհրաժեշտություն կա համայնքում:

Խնդրին լուծում տալու համար առաջարկվում է

	բնակավայրերի համար ձեռք բերել ավտոաշտարակ, որը կսպասարկի բոլոր բնակավայրերը: Ծրագրի անմիջական օգտվող տնային տնտեսությունների թիվը կկազմի 9790:
Ակնկալվող արդյունքները	Ծրագրի ակնկալվող արդյունքներն են **1. Փողոցային լուսավորության որակի և անխափանության բարելավում** • Վթարային խափանումների արագ վերացման շնորհիվ բնակավայրերի փողոցները մշտապես կլուսավորվեն: • Արդյունքում կբարելավվի քաղաքացիների անվտանգությունը՝ հատկապես երեկոյան և գիշերային ժամերին: **2. Հրդեհների և վթարների կանխարգելում** • Վթարային վիճակում գտնվող էլեկտրալարերի և լուսատուների ժամանակին փոխարինման միջոցով կկանխվեն հրդեհների և էլեկտրական վթարների հնարավորությունները: **3. Գույքի և ռեսուրսների արդյունավետ կառավարում** • Ավտոաշտարակի առկայությամբ համայնքը կխնայի միջոցներ, որոնք մինչ այս ծախսվում էին ավտոաշտարակի վարձակալման վրա: • Ապահովվում է աշխատանքների օպերատիվություն և ժամանակի խնայողություն: **4. Աշխատանքների կազմակերպման արդյունավետություն համայնքում** • Ոչ միայն փողոցային լուսավորության, այլ նաև տանիքների վերանորոգման, սեզոնային զարդարանքների, և այլ բարձրության վրա կատարվող աշխատանքների արդյունավետ իրականացում: **5. Բնակչության զոհունակության և համայնքի հեղինակության բարձրացում** • Բնակավայրերում մշտական և որակյալ լուսավորության ապահովումը նպաստում է բնակիչների կյանքի որակի բարձրացմանը: • Համայնքապետարանը դառնում է ավելի ճկուն, արագ արձագանքող և արդյունավետ կառույց:

	6. Տնտեսական օգուտ • Վթարները և դրանց հետևանքով առաջացող վնասները նվազում են, ինչը կրճատում է համայնքի վթարային վերանորոգման և գույքի վերականգնման ծախսերը: • Ավտոաշտարակի առկայությունը թույլ կտա համայնքին ինքնուրույն իրականացնել նաև այլ տեխնիկական աշխատանքներ՝ խնայելով մասնավոր ծառայությունների վարձը:
Միջոցառման արդյունքների ապահովման նպատակով իրականացվող գործողություններն ու միջոցառումները	**Միջոցառման արդյունքների ապահովման նպատակով իրականացվող գործողություններն ու միջոցառումները** 1. **Ավտոաշտարակի տեխնիկական բնութագրերի սահմանում և գնումի կազմակերպում** ○ Մշակվում է ավտոաշտարակի անհրաժեշտ տեխնիկական նկարագիրը՝ համապատասխան Վարդենիս համայնքի ռելիեֆին, բնակավայրերի կառուցապատմանը և աշխատանքների ծավալին: ○ Իրականացվում է գնումների գործընթաց՝ ՀՀ օրենսդրության համաձայն: 2. **Ավտոաշտարակի շահագործման մեխանիզմի ներդրում** ○ Համայնքապետարանի համապատասխան ծառայությունը կազմակերպում է ավտոաշտարակի շահագործման կարգ և արագ արձագանքման հերթապահություն՝ վթարային դեպքերում: ○ Որպես կանոն սահմանվում է՝ 24-72 ժամվա ընթացքում վթարի վերացման ժամկետ: 3. **Վնասված լուսատուների պլանային և վթարային փոխարինում** ○ Իրականացվում է համայնքի բոլոր 36 բնակավայրերում լուսատուների և էլեկտրալարերի պլանային վերանայում և անհրաժեշտության դեպքում՝ վերանորոգում/փոխարինում: ○ Վթարային իրավիճակների դեպքում արձագանքվում է օպերատիվ կարգով: 4. **Մշտադիտարկման և հաշվառման համակարգի**

	ներդրում ○ Սահմանվում է խափանված լուսատուների և վերականգնման դեպքերի հաշվառման պարզ և թափանցիկ մեխանիզմ: ○ Ստեղծվում է տվյալների բազա՝ լուսատուների վիճակի մասին պարբերաբար վերլուծություններ կատարելու և նախազգուշական գործողություններ նախանշելու համար: 5. **Տոնական և սեզոնային աշխատանքների իրականացում** ○ Նոր տարվա, այլ տոնական օրերի կամ համայնքային միջոցառումների ընթացքում ավտոաշտարակն օգտագործվում է բարձրության վրա իրականացվող ձևավորումների, լույսերի տեղադրման և ապամոնտաժման նպատակով: 6. **Ավտոաշտարակի բազմաոլորտ կիրառություն** ○ Ապահովվում է ավտոաշտարակի կիրառումը ոչ միայն լուսավորության ոլորտում, այլ նաև համայնքային ենթակառուցվածքների վերանորոգման աշխատանքներում՝ տանիքների վերանորոգում, այուների սպասարկում և այլն: 7. **Հանրային իրազեկման միջոցառումներ** ○ Տեղեկատվական արշավ համայնքի բնակիչների շրջանում՝ իրականացվող բարելավումների, սպասարկման նոր հնարավորությունների և արագ արձագանքման ծառայությունների մասին:
Միջոցառման շահառուները	Միջոցառման ուղղակի շահառուներն են համարվում Վարդենիս համայնքի բոլոր բնակիչներիը, մոտավորապես 9790 տնային տնտեսություն:
Ծրագրի կատարման ժամկետները	**26.**05.2025-31.12.2025 Ծրագրի ավարտից հետո, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022թ օգոստոսի 4-ի N 1198-Ն որոշման Հավելված N 1-ի 2-րդ կետով սահմանված ժամկետներում կներկայացվի ծրագրի տարեկան հաշվետվությունը:
Ծրագրի հնարավոր ռիսկերը	Վարդենիս համայնքը ունի նմանատիպ ծրագրեր իրականացնելու փորձ, քանի որ վերջին տարիներին սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացվել և իրականացվում են ոռոգման ջրագծերի կառուցման կամ վերակառուցման աշխատանքներ:

	Վերոնշյալ ծրագրի ռիսկ կարող են լինել ֆորսմաժորային իրավիճակները, երբ անհաղթահարելի ուժի ազդեցությամբ հնարավոր չի լինի իրականացնել ծրագիրը:
Միջոցառման հիմքերը	Միջոցառման հիմք է հանդիսանում «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 8-րդ մասը: ՀՀ կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 1-ի N 1370-Ն որոշման՝ համայնքային մասհանումների ծախսման ծրագրով նախատեսված միջոցառումների ուղղությունները, դրանց առաջնահերթությունները՝ համայնքային մասհանումների ծախսման ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնահերթությունը տրվում է ազդակիր բնակավայրին: Վարդենիս համայնքի 35 բնակավայրի կարիքների համար ավտոաշտարակի ձեռքբերումը առաջնահերթություն է համաձայն ՀՀ կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 1-ի N 1370-Ն որոշման 2-րդ հոդվածի 6-րդ կետի ե) ենթակետի: Նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 27,000,000 ՀՀ դրամ /կից ներկայացված է իրականացվելիք աշխատանքերի ֆինանսական նախնական գնահատականները, հաշվարկները/: Ծրագիրը ներկայացված է համայնքի 2022-2026թթ հնգամյա զարգացման ծրագրում, որի հաստատման ընթացքում անցել է հանրային քննարկում:

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վարդենիս համայնքի մասհանումների ծախսման 2025 թվականի ծրագրի ֆինանսական գնահատականները

Հ/Հ	Միջոցառման անվանում	Ծրագրի արժեքը, ընդամենը/հազ. դրամ/	Պետական բյուջե /հազ.դրամ/
1	Վարդենիս համայնքի 36 բնակավայրերը սպասարկելու համար ավտոաշտարակի ձեռքբերում	27,000,000	27,000,000

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ